

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2015 թվականի

N 15-Ա

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագի 1.19 կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015թ. փետրվարի 12-ի N 11.1/1159-15 գրավոր առաջարկության՝ որոշում եմ

1. Հաստատել Հայոց ցեղասպանության 100-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային միջոցառումների ծրագիրը և համակարգող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ

Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ




2015թ. փետրվարի 13
ք. Կապան

Կ Ա Ձ Մ


Հայոց ցեղասպանության 100-րդ տարեդարձին նվիրված ՀՀ Սյունիքի մարզային միջոցառումները համակարգող հանձնաժողովի

- | | |
|---------------------|---|
| 1. Ս. Խաչատրյան | ՀՀ Սյունիքի մարզպետ, /նախագահ/ |
| 2. Վ. Գրիգորյան | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /տեղակալ/ |
| 3. Վ. Դավթյան | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /տեղակալ/ |
| 4. Հ. Ալեքսանյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| 5. Ս. Ավետիսյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| 6. Ս. Դավթյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ |
| 7. Լ. Մարության | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ |
| 8. Ա. Հայրապետյան | Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 9. Վ. Ադունց | Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 10. Ա. Հովհաննիսյան | Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 11. Մ. Զաքարյան | Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 12. Վ. Գևորգյան | Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 13. Ա. Հակոբջանյան | Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ




Ծ Ր Ա Պ Բ
 Հայոց ցեղասպանության 100-րդ տարեդարձին նվիրված ՀՀ Սյունիքի մարզային միջոցառումների

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Անցկացման ժամկետը | Պատասխանատու մարմինը | Ծանոթություն |
|-----|---|-------------------|-----------------------------------|--------------|
| 1 | Մարզի համայնքներում կառուցված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների և խաչքարերի վերանորոգում, տարածքների մաքրում և բարեկարգում, խնամում | ապրիլ | համայնքներ | |
| 2 | Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ծառատունկ՝ <<Բացվող նոր 100 գարուններ>> խորագրով | ապրիլ | մարզպետարան, քաղաքային համայնքներ | |
| 3 | Մարզի զանգվածային լրատվամիջոցներով Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված հաղորդումների պատրաստում և հեռարձակում, վավերագրական ֆիլմերի ցուցադրում և միջոցառումների լուսաբանում | փետրվար-ապրիլ | մարզային ՀԼՄ-ներ | |
| 4 | Մարզի թանգարաններում և մշակութային օջախներում կազմակերպել Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված փաստաթղթերի և լուսանկարների, երիտասարդ նկարիչների կերպարվեստի աշխատանքների ցուցահանդեսներ | ապրիլ | մարզպետարան, քաղաքային համայնքներ | |
| 5 | Մարզի ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում <<Հայոց ցեղասպանության պատմական դասերը>>, <<Մշակութային ցեղասպանություն>>, <<Հիշում եմ և պահանջում>> թեմաներով սեմինար պարապմունքների, շարադրությունների մրցույթների անցկացում, <<Հայոց ցեղասպանության հետևանքով միլիոնավոր մանուկներ չճնվեցին>> բողոքի շարժում | տարվա ընթացքում | մարզպետարան, | |

| | | | |
|----|--|-----------------|-----------------------------------|
| 6 | <p><<Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ներդրում ունեցած հայորդիների հիշատակը հավերժացնող>> հուշակոթողի հիմնարկեք</p> | ապրիլ-սեպտեմբեր | մարզպետարան, Կապանի քաղաքապետարան |
| 7 | <p>Մշակույթի կենտրոններում, մարզային և համայնքային ակումբ-գրադարաններում, երաժշտական և արվեստի, հանրակրթական դպրոցներում կազմակերպել <<Գարունա, ծյուն ա արել>>, <<Քելե լառ, քելե էրթանք մըր էրգիր>> խորագրով ասմունքի երեկոներ, զրույցներ, գրքի քննարկումներ, եղեռնի զոհ դարձած հայ դասական ստեղծագործողների առանձին անկյուններ, միջոցառումների շարք</p> | մարտ-ապրիլ | մարզպետարան, համայնքներ |
| 8 | <p><<Հիշում եմ և պահանջում>> խորագրով զանգերի ղողանջ, լուռության արդթք և մոմավառություն նվիրած Մեծ եղեռնի 100-ամյակին</p> | ապրիլ | մարզպետարան, համայնքներ |
| 9 | <p>Կլոր սեղան հանրակրթական դպրոցների ուսուցիչների եւ բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ՝ <<Արդի քաղաքական դաշտում Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը>> թեմայով:</p> | մարտ-ապրիլ | մարզպետարան, համայնքներ |
| 10 | <p>Առաջին համաշխարհային պատերազմի մասնակիցների վերաբերյալ մարզի թանգարաններում, փառքի սրահներում նյութերի հավաքագրում և նվիրաբերում:</p> | տարվա ընթացքում | մարզպետարան, համայնքներ |
| 11 | <p>Քաղաքային համայնքներում կազմակերպել ջահերով երթ՝ դեպի ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրներ</p> | ապրիլ | մարզպետարան, քաղաքային համայնքներ |

| | | | | |
|----|---|------------------------|---|--|
| 12 | <p>Հանրահավաք և երթ հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողներ, օրհներգություն, Կոմիտասյան շարականների կատարում՝ երգչախմբերի կողմից</p> | <p>ապրիլ</p> | <p>մարզպետարան, համայնքներ</p> | |
| 13 | <p>Մարզում ցեղասպանություն վերապրածների անվանացուցակների ճշտագրված աշխատանքների կազմակերպում, նրանց ժառանգների հետ հանդիպումների, հուշ երեկոների, մեծարման երեկոների կազմակերպում</p> | <p>մարտ-ապրիլ</p> | <p>մարզպետարան, համայնքներ</p> | |
| 14 | <p>Սուրբ պատարագ՝ հավարտ հոգեհանգիստ ցեղասպանության զոհերի հոգվոց հանձնության համար</p> | <p>ապրիլ</p> | <p>Հայ Առաքելական եկեղեցու Սյունյաց թեմ</p> | |
| 15 | <p>Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված թատերական բեմականացումներ. Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն՝ Ռիչարդ Կալինսկու <<Ընշը լուսնի վրա>>, Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն՝ Լ.Մուրաֆյան <<Սրճարան հիշողություն>>, Սիսիանի Հ.Սահյանի անվան մշակույթի կենտրոն՝ Պ.Զեյթունցյան <<Ուտքի դատարանն է գալիս>>:</p> | <p>տարվա ընթացքում</p> | <p>մարզպետարան, համայնքներ</p> | |
| 16 | <p>Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված գեղարվեստական ֆիլմերի 10-օրյակ. Արոմ Էգոյան՝ Արարատ, Տավանի եղբայրներ՝ Արտույտների ագարակը, Ժիրայր Ավետիսյան՝ Ձորի Միրոն, Հենրիկ Մայլան՝ Նահապետը, Անրի Վերնոյ՝ Մայրիկ:</p> | <p>մարտ-ապրիլ</p> | <p>մարզպետարան, համայնքներ</p> | |



ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Ռ.ՂԱԶԱՐՅԱՆ